

## Անձեռնմխելի գրականության բաժին

Անձեռնմխելի գրականության բաժինը Ազգային գրադարանի կառուցվածքային ստորաբաժանումներից է, որը հավաքում, պահպանում և սպասարկում է հայերեն և հայատառ տպագիր նյութերի/ գրադարանային փաստաթղթերի /բոլոր տեսակները՝ տպագրված՝ 1512 թվականից մինչև մեր օրերը, ռուսերեն և այլալեզու հնատիպ գրականությունը, ինչպես նաև հազվագյուտ, հայագիտական, պատմական, մշակութային և թանգարանային արժեք ներկայացնող հրատարակությունները՝ անկախ տպագրման վայրից և ժամանակից, ինչպես նաև՝ նշանավոր գործիչների անձնական գրադարանները:

Անձեռնմխելի գրականության բաժնի պատմությունը սկսվում է 1928 թվականից, երբ գրադարանի բոլոր հազվագյուտ և հնատիպ գրքերը՝ 2000 միավոր, հավաքվել են առանձին պահարաններում, և գրապահոցին կից ստեղծվել է ունիկումների ենթաբաժին:

1931թ. ֆոնդերից առանձնացվել է մեկական օրինակ, և ստեղծվել է անձեռնմխելի (արխիվային) հավաքածուն:

1940թ. ունիկումների ենթաբաժինը վերակազմավորվել է որպես հնատիպ և հազվագյուտ գրականության բաժին՝ կից ընթերցասրահով:

1943թ. ՀՍՄԸ ժողկոմխորհի հունիսի 2-ի «Հայերեն լեզվով տպագիր արտադրանքը Հայկական ՍՄԸ պետական հանրային գրադարանում կենտրոնացնելու մասին» որոշման համաձայն՝ հայկական անձեռնմխելի հավաքածուն միացվել է հնատիպ և հազվագյուտ գրականության բաժնին, և ստեղծվել է Հնատիպ, հազվագյուտ և անձեռնմխելի գրականության բաժինը:

2016թ. մարտի 1-ից „Հայաստանի ազգային գրադարան,, ՊՈԱԿ-ի տնօրենի՝ 2016 թվականի հունվարի 8-ի N-01 հրամանի համաձայն՝ Հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժինը վերանվանվեց՝ Անձեռնմխելի գրականության բաժնի:

Բաժնի կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

- [Հայ գրքի ուսումնասիրման ենթաբաժին](#)
- [Հայ գրքի պահպանման ենթաբաժին /1851թվականից/](#)
- [Նվիրատվությունների և անհատական հավաքածուների ենթաբաժին](#)
- [Պարբերական մամուլի ուսումնասիրման ենթաբաժին](#)

Բաժինը մասնակցում է ազգային գրադարանի հավաքածուների /գրքերի և մամուլի/

սքանավորման աշխատանքներին:

Ավարտվել են հայերեն հնատիպ և հայերեն 1801-1850թթ. գրքային հավաքածուի թվայնացման աշխատանքները (տես <http://www.nla.am/>Շտեմարաններ):

Բաժինն իր ընթերցասրահով գտնվում է վարչական մասնաշենքի 3-րդ հարկում և միաժամանակ կարող է սպասարկել 24 ընթերցող:

Ընթերցասրահը սպասարկում է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 9:00 - 17:30